# ԼՈՒՐԵՐ

***Փետրվարի 6-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանն ընթերցեց Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը (Տե՛ս էջ 3):

Ս. Պատարագին ներկա էր Վահափառ Հայրապետը:

***Փետրվարի 13-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Փութասջի՛ր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ» (Բ Տիմոթ. Բ 15)» բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վահափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Տյառնընդառաջի նախատոնակ կատարվեց: Նախատոնակի ավարտին Մայր Աթոռի ողջ միաբանությունը՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները և բազմաթիվ հավատացյալներ հավաքվեցին Ճեմարանի մարզադաշտում՝ Տյառնընդառաջի խարույկը վառելու և տոնը երգերով ու ասմունքներով դիմավորելու համար: Տոնախմբության ընթացքում եկեղեցու կանթեղներից վերցված կրակով Վեհափառ Հայրապետը վառեց ավանդական խարույկը:

***Փետրվարի 14-ին, երկուշաբթի.- Ա. օր Առաջաւորաց պահոց: Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:***

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հնգօրյա այցով մեկնեց Ժնև:

Նույն օրը Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց» (Ղուկ. Բ 29-31) բնաբանով:

***Փետրվարի 19-ին, շաբաթ.- Սրբոցն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն:***

Այսօր, երեկոյան ժամը 22.30-ին, Ժնևից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 20-ին, կիրակի.- Զ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սնապուհ եպս. Չուլջյանը: Ս. Պատարագի սկզբում Մայր Տաճար բերվեց Անդրանիկ Զորավարի աճյունը: «Հայր մեր»-ից առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն, որից հետո զորավարի հիշատակին նվիրված քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Մահկանացու ծնեալ, անմահ զիւր յիշատակ եթող» բնաբանով (Տե՛ս էջ 10): Քարոզի ավարտին զորավարի աճյունը դուրս հանվեց Մայր Տաճարից և շքախմբի ուղեկցությամբ տարվեց Երևան՝ Եռաբլուրում հողին հանձնելու համար:

***Փետրվարի 27-ին, կիրակի.- Է. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եւ եղեւ հերձուած ի մէջ ժողովրդեանն վասն նորա» (Հովհ. Է 43) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 29-ին, երեքշաբթի.- Սրբոց Ղեւոնդեանց քահանայից:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Ընթացս Պատարագի տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրությունից հետո Տ. Շահե արքեպս. Աճեմյանը քարոզ խոսեց՝ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ» (Մաշտոց ձեռնադրության) բնաբանով: